




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ  
«ԲԱԱՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



«06 » 02 2017 թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 07

Ձեռնարկողը՝

«Այրն Մայնինգ» ՍՊԸ

Գործունեությունը՝

Բազումի երկաթի երևակումում օգտակար հանածոների  
արդյունահանման նպագակով ընդերքի երկրաբանական  
ուսումնասիրության աշխափանքների շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահավման հայտ  
*Հոգու մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԽ  
տնօրեն՝

Վ. Սահակյան



Առողի եզրակացությունը՝ Կթերք

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԶԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆԱՍԻԹՅՈՒՆ

ρήγλ ΦΦ 07

06 02 2017 p.

Thymus 1 epith.

*Ray S*  
07.02.2017a  
*CC-By-NC-Sa*

*«Լոռու մարզի Բազումի երկաթի երևակումում օգտակար հանածոների  
արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական  
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ*

Պատվիրատու՝	<<Այրն Մայնինգ>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Այրն Մայնինգ>> ՍՊԸ
Ներկայացված Այութեք՝	Նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Գ կատեգորիա
	ՀՀ Լոռու մարզ

«Այրն Մայնինգ» ՍՊ ընկերությունը հիմք ընդունելով նախկինում կատարված ուսումնասիրության փաստաթղթավորված տվյալները և նմուշարկման արդյունքները՝ Բազումի երկաթի երևակման պաշարների արդյունաբերական գնահատում C<sub>1</sub> և C<sub>2</sub> կարգերով, նախատեսում է հանքանյութերի տեխնոլոգիական տիպերի առանձնացում, մետաղների կորզման տեխնոլոգիաների ուսումնասիրում լարորատոր պայմաններում, պաշարների հաշվարկման համար տեխնիկատնտեսական հիմնավորման և պաշարների արդյունաբերական գնահատմամբ երկրաբանական հաշվետվության կազմում:

«Բազումի երկաթի հանքերնակում» անվան տակ ենթադրվում է Հալաբի լեռնաշղթայի հարավային փեշին ընկած տեղամասը: Տեղամասի հետախուզումը կատարվել է փորվածքների իրարից անջատ, առանձին, անհամաշափ հետախուզական ցանցով, որի հետևանքով տեղամասում հնարավոր չի եղել պարզել հանքային մարմինների կառուցվածքը, հանքայնացման համասեռությունը, հանքային մարմինների հանքայնացման փոխհարաբերությունը ինտրուզիվ զանգվածի և հրաբխանատվածքային ապարների հետ, անհայտ է մնացել շատ մարմինների մորֆոլոգիան և դրանց հանքայնացման որակը և քանակը: Հանքային մարմինների տեքստուր-ստրուկտուրային և միներալոգիական կազմը որոշվել է եզակի լայնակի կտրվածքներով: Ինչ վերաբերվում

Է երևակման արևելյան և կենտրոնական տեղամասի հյուսիս-ալեւյան հատվածին, ապա դրանք մնացել են ընդհանրապես չհետախուզված: Տեքստուր-ստրուկտուրային հատկություններով և միներալոգիական կազմով հանքաերևակումում առանձնանում են հանքաքարի չորս տիպ՝ համասեռ մազնետիտային, համասեռ պիրիտ-մազնետիտային, հարուստ մարտիտ-մազնետիտային և անհավասարաշափ բաշխված մազնետիտային:

Որոնողազնահատողական աշխատանքներից հետո կատարվել է Բազումի երկարի հանքաերևակման «կենտրոնական» տեղամասի հանքաքարի C<sub>2</sub> կարգի պաշարների նախնական հաշվարկ, որը կազմվել է 148.8մլն.տ հանքաքար, 38.8% երկարի միջին պարունակությամբ, իսկ P<sub>2</sub> կարգի կանխագուշական ռեսուրսները կազմել են 300մլն.տ:

Բազումի հանքաերևակման դաշտը գլխավորապես կազմավորված է հրաբխածին, հրաբխածին-նստվածքային, ինտրուզիվ և սուրերաբխային ապարներով: Գտնվելով ալպիական ծալքավորման գոտում, ընդգրկելով Սևան-Շիրակ սինկլինորիումի կենտրոնական մասը, հետազոտված տարածքը հանդիսանում է փոքր Կովկասյան խոշոր ստրուկտորաներից մեկը, տարածվելով մոտ 200կմ ռեալի հյուսիս-արևմուտք՝ 30-35կմ լայնությունով:

Համաձայն ներկայացված հայտի՝ Բազումի երկարի երևակման ուսումնասիրության աշխատանքներն ընդգրկելու են 2017թ. առաջին եռամսյակից մինչև 2019թ. չորրորդ եռամսյակը, իր մեջ նեռառելով հետյալ աշխատանքները.

- Հարզային անալիզների են ենթարկվելու նախկինում վերցված 3500 նմուշներ: Հաշվի առնելով դրանց արտաքին և ներքին հսկողական անալիզների քանակը (5%), ապա բնողանուր հարզային անալիզի կենթարկվեն 3675 նմուշ:

- Նմուշներում  $\text{Fe}_3\text{O}_4$ -ին  $\text{Fe}_2\text{O}_3$ -ին ուղեկցող մետաղների (Co, Pt, Au, Ag, Ge) և վնասակար ընդհանուր-սուլֆիդային (S,  $\text{TiO}_2$ ) խառնուրդների քանակը որոշելու նպատակով նախատեսվում է կատարել նմուշների քիմիական անալիզ: Քիմիական անալիզի կենթարկվի ակոսային, հորատահանուկի համախառն նմուշների նախկինում վերջված ամբողջ խմբաքանակը՝ 3500 նմուշ:

- Հսկողական անալիզներ՝ համաձայն գործող մեթոդական ցուցումների, որի ընթացքում անհրաժեշտ է սխալեմատիկ հսկել քիմիական անալիզների որակը:

Պատահական սխալի մեծությունը բացահայտելու նպատակով կկատարվեն հսկողական անալիզներ, անալիզի ենթարկված նմուշների կողավորված կրկնօրինակների կրկնակի անալիզներով՝ դրանք ներկայացնելով նույն լարորատորիա, որտեղ կատարվել է բնօրինակի անալիզը:

Սիստեմատիկ սխալների առկայության դեպքում անհրաժեշտ է պարզել սխալի պատճառը և մշակել դրա վերացման միջոցառումները: Միևնույն ժամանակ կրկնել այդ դասի բոլոր անալիզները, կամ հիմնական անալիզների արդյունքներում մտցնել ուղղման գործակից:

- Ստացված տվյալներով կկատարվի հանքաքարի երկրաբանատեխնոլոգիական տիպայնացում (արդյունաբերական տիպերի և որակների տարամշատում), կորոշվեն նյութական կազմի փոփոխությունները տարածության մեջ, հանքաքարի



ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները և կկազմվեն երկրաբանատեխնոլոգիական քարտեզներ, հատակագծեր, կտրվածքներ:

- Աշխատանքների ավարտից հետո կկատարվի օգտակար հանածոյի պաշարների գնահատում և կտրվի հիմնավորում հեռանկարային տեղամասերի վերաբերյալ՝ դրանցում հետագա երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակահարմարության մասին:

- Աշխատանցային աշխատանքների ժամանակ կկատարվի ամբողջ փաստացի նյութի ընդհանրացումը և համակարգումը, երկրաբանական հաշվետվության կազմումը համապատասխան ներդիր քարտեզներով, կտրվածքներով և այլն:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 24.01.2017թ. Գուգարքի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Հստ ներկայացված նախնական գնահատման հայտի Բազումի երկարի հանքերևակումը տեղակայված է Բազումի լեռնաշղթայի հարավ-արևելյան փեշերին՝ զբաղեցնելով ամբողջ Հալաբի լեռնաճյուղի հյուսիս-արևմտյան մասը՝ սկսած Բլղան և Աղստև գետերի միացման կետից արևելքում և Փամբակ գետի ակունքներից արևմուտքում:

Հանքերևակման տարածքը ներառված է Գուգարք համայնքի վարչական սահմաններում և զբաղեցնում է մոտ 621.4հա տարածք, որը բնութագրվում է խիստ լեռնային ռելիեֆով, խոր ձորերով: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 3000-1000մ:

Շրջանի կլիման բնութագրվում է որպես խոնավ, բարձրադիր լեռնային, համեմատաբար մեղմ: Տարեկան միջին ջերմաստիճաններ են, ամռանը՝ +25C, ձմռանը՝ +10C: Տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 600-700մ.:

Տարածքի գլխավոր ջրային զարկերակը Փամբակ գետն է, որը սկիզբ է առնում Զաջուռի լեռնանցքից: Դրա հարավային վտակներն են Բեղձոր, Ֆորերի ջուր, Թեղուտ ջուր, Որսկանի ջուր գետերը և այլ վտակներ:

Հաշվի առնելով հանքային դաշտի տարածման չափերը, հանքային գոտու հզորությունները, հանքայնացման չհետախուզված անոմալիաները և հանքային մարմինները Ընկերություն նախատեսվում է կատարել նախկինում ստացված փաստաթղթային տվյալների և նմուշարկման արդյունքների լրացուցիչ ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով կատարելու հանքավայրի արդյունաբերական նշանակության առավել ամբողջական հիմնավորում: Ընկերությունը լրացուցիչ նմուշարկում, հորատում և տեղանքում կատարվող այլ աշխատանքներ չի նախատեսվում, ուսումնասիրությունը կատարվելու է միայն տեղանքում նախկինում կատարված աշխատանքների արդյունքում ձեռք բերված տվյալների լրացուցիչ գրասենյակային և լաբորատոր հետազոտման և համադրման հիման վրա: Ուսումնասիրության ընթացքում կճշտվեն հանքային գոյացումների ամբողջականությունը, տարածումը, հզորությունը, կկատարվի հանքաբարի տեխնոլոգիական հատկությունների հետազոտում, որը թույլ կտա գնահատել և հիմնավորել օգտակար հանածոյի արդյունաբերական պաշարների առկայությունը:



Բազումի երկաթի երևակման երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքային ծրագրով շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում՝ հաշվի առնելով, որ ծրագրով կատարվելու է միայն նախկինում ստացված փաստաթղթային տվյալների և նմուշարկման արդյունքների լրացուցիչ ուսումնասիրություն: Այսինքն՝ տեղում որևէ աշխատանք չի կատարվելու, ինչն էլ բացառում է շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունենալու հավանականությունը:

Փորձաքննական պահանջ

Արգելվում է հանքերևակման տարածքի հողային ծածկույթը խախտող երկրաբանահետախուզա-որոնողական աշխատանքների իրականացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Այրն Մայնինգ» ՍՊԸ ՀՀ Լոռու մարզի Բազումի երկաթի երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնաժողութեան



Կ. Մովսիսյան